№ 187 Հոկտեմբերի 9 Շաբաթ 1882 Հոկտեմբերի 9 Շաբաթ № 187

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԹԱՄԱՐԱ ԳՐՈՒԶԻՆՍԿԱՅԱ և ԻՇԽԱՆՈՒՀԻ ՍԱԼՈՄԷ ԻՍԱՀԱԿԵԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ, յայտնումեն, որ հանդուցեալ ԱՐԲԱՑԱԶՆ ԻՇԽԱՆՈՒՀԻ ՄԱՐԻԱՄ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ յուղարկաւորութիւնը կը կատարվի կիրակի, հոկտեմբերի 10-ին, առաւօտեան 10 ժամին, իր սեփական տանից դէպի վանքի մայր եկեղեցին, ուր և կամիրվի հանդուցեալի մարմինը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց Թատրոն։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ախալցխայից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դպրաքաղի աստղագէտը։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

—

Ներկայ յօդուածում մենք դիտաւորութիւն ունենք համեմատել Թատրօնի գործը մամուլի գործի հետ։

Ինչպէս Թատրօնը, այնպէս էլ մամուլը, լրագիրը, կարող են գոյութիւն ունենալ միմիայն հիմնվելով մի ազգի մեծամասնութեան վրա, դրաւելով որքան հնար է մի մեծ շրջան յաճախողների, կամ կարդացողների։

Լրագիրը եթէ դրված է լինում այն անբնական դիրքի մէջ, որ այն քաղաքում, որտեղ հրատարակվում է նա, բաժանորդների շատ աննշան թիւ ունի, նա դարձեալ գոյութիւն կարող է ունենալ նրանով, որ բաժանորդներ է ճարում այլ քաղաքներից և գիւղերից։

Թատրօնը, ընդհակառակն, կարող է գոյութիւն ունենալ, միայն այն ժամանակ, երբ կունենայ բաւական մեծ թիւ յաճախողների նոյն իսկ այն քաղաքում, որտեղ նա հիմնված է։ Թատրօնի բանը այդ կողմից լրագրի գործից աւելի դժուար է. նա ոչինչ յոյս չէ կարող դնել օտարաքաղաքացիների վրա։

Ով պէտք է յաճախի Թիֆլիսի հայոց Թատրօնը. պարզ բան է, որ միմիայն Թիֆլիսի մէջ բնակվող հայերը, նախ որովհետև, շատ քիչ բացառութեամբ, միայն հայերն են հասկանում հայերէն լեզուն, և երկրորդ որ գրսից եկող հայերը շատ քիչ թիւով են լինում մեր քաղաքում։ Թատրօնի գործը, այդ կողմից, ուրեմն աւելի դժուար է, քան թէ լրագրութեան գործը, և նոյն իսկ այդ պատճառով նրան աւելի մեծ զգուշութեամբ և հեռատեսութեամբ պէտք է առաջ տանել։

Թիֆլիսում կան 40,000 հայ բնակիչներ, բայց այդ թիւից որքան հոգի յաճախում էին հայոց Թատրօնը անցեալ տարիներում, երբ մեր Թատրօնը համարվում էր իր ամենափառաւոր դրութեան մէջ։ Ամարային Թատրօնը, որտեղ խաղում էր խումբը, այն ժամանակ տեղաւորում էր իր մէջ 800 հոգի, շատ շատ 1000 հոգի։ Բայց բոլոր ներկայացումներում մենք միշտ տեսնում էինք մի և նոյն դէմքեր, մի և նոյն անձնաւորութիւններ։ Ուրեմն այդ հազար անձինք էին որոնք պահպանում էին Թատրօնի ամբողջ գոյութիւնը, ուրեմն մնացած 39,000 հոգի Թիֆլիսի հայ ազգաբնակութեան, կատարելապէս անտարբեր էին մնում դէպի Թատրօնական գործը։

Ընդունենք որ 40,000 Թիֆլիսի հայ բնակիչներից 20,000 հոգի կատարելապէս չքաւոր են և միջոց չունեն Թատրօն յաճախելու,—Թող 20,000 հոգի հերթով գային իւրաքանչիւր պիէսան տեսնելու, Թող գային 10,000, վերջապէս 5000 հոգի։ Բայց այդ էլ չը կար. մի և նոյն ութ հարիւր կամ հազար հոգի էին յաճախում Թատրօնը։

Այդպիսով Թատրօնը, ի հարկէ, երկարատև գոյութիւն ունենալ չէր կարող, քանի որ նրա պահպանողները մի յայտնի նեղ շրջան էին, մինչև անգամ ոչ յայտնի մի դասակարգ քաղաքի ազգաբնակութեան միջից։

Այդպիսով Թատրօնը պահպանվելով մի նեղ շրջանով, չը դարձաւ քաղաքի մեծամասնութեան համար մի կենսական, մասաւոր պահանջ, այլ մնաց մի շռայլութեան առարկայ մի նեղ շրջանի համար։ Ուրեմն նա տեղական գոյութիւն ունենալ էլ չէր կարող, քանի որ զուրկ էր նոյն իսկ Թատրօնական գործի առաջին, ամենաանհրաժեշտ պայմանից՝ դառնալ հասարակութեան մեծամասնութեան համար անհրաժեշտ, կենսական, առօրեայ մտաւոր պահանջ, յենվել իր մայրենի լեզուն հասկացող քաղաքային հայ ազգաբնակութեան մեծամասնութեան վրա։

Բայց մեզ կը հարցնեն. ի՞նչ է հարկաւոր, ուրեմն, այդ նպատակին հասնելու համար։ Զորս բան, կը պատասխանենք մենք. 1) հասկանալի լեզու, 2) հասկանալի, մատչելի և գրաւիչ ռեպերտուար, 3) հասկանալի խաղ և 4) էժան մուտք։

Այդ չորս պայմանները եթէ միացրած լինեն, Թատրօնի գործը կարող է աջողվել ամեն քաղաքում, կարող է ժամանակով դառնալ մեծամասնութեան համար պահանջ և ոչ թէ փոքրամասնութեան համար խազալիք կամ շռայլութեան առարկայ, կարող է Թատրօնի վարիչների ձեռքում դառնալ ժողովուրդը կրթող միջոց և ոչ թէ նոյն վարիչների համար ունայն փառքի և անձնական նպատակներին հասնելու մի միջոց։

Բայց անցեալ տարիների հայոց Թատրօնը Թիֆլիսում զուրկ էր նոյն իսկ մեր վերև յիշած չորս ամենաանհրաժեշտ պայմաններից, որպէս զի ժողովրդական դառնայ, հիմնվի քաղաքի հայ ազգաբնակութեան մեծամասնութեան վրա և ուրեմն շարունակի իր գոյութիւնը։ 1) Լեզուն հասկանալի չէր, քանի որ պօլսական էր, 2) ռեպերտուարը մատչելի չէր, քանի որ անմատչելի, անբնական, հնացած-ֆրանսիական, ռոմանտիական, ահ ու սարսափներով լի, կոմերով ու մարկիզներով պիէսաներից էր բաղկացած, 3) խաղը անբնական, արուեստական, ոչ միայն ձեր բնակարանում չէ կարելի կատարել, այլ մինչև անգամ այստեղ ևս չէ կարելի, եթէ դուք հրաման չէք տայ ինձ՝ մնալու խանումի հետ միայնակ։

—Քեզ... միայնակ... կրկնեց խանը.—այդ նոր բան է...

Նա դարձեալ սկսեց ուշադրութեամբ երկար նայել աստղագէտի վրա, որի կատարելապէս այլանդակութիւնը փոքր ինչ հանդարտացրեց խանի կասկածը, և նա հարցրեց.

—Մթէ չէ կարելի թողնել այստեղ գոնէ մի ներքինի։

—Ոչ մէկին, խան, այդ անսիրտ մարդիկը ունեն ամենավատ ազդեցութիւն մանկահասակ խանումների ճակատագրի վրա։ Նրանք բոլորը ստեղծված են անբարեյաջող աստղների ներգործութեան ներքոյ։

—Լսիր, աստղագէտ, ասաց Փանահ-խանը,—դու առաջինն ես իմ տեսած բոլոր հաքիմներից և աստղաբաշխներից, որ պահանջում ես այսպիսի նախազգուշութիւններ։ Արդեօք, թագնված չէ՞ մի բան այդ օտարոտի պահանջումների տակ։ Ցէս, զդոյշ կաց։ Փանահ-խանը դիտէ արժանաւոր կերպով վարձատրել ծառայութիւնները, դիտէ և խիստ կերպով պատժել անհաւատարմութիւնը։

—Մի բարկացէք, խան, ասաց Սալիհան անդգուշութեամբ,—կարելի է դա աւելի հմուտ է բոլորից։ Թոյլ տուեցէք ինձ խօսել դրա հետ։

Փանահ-խանը այդ խօսքերից հասկացաւ աւելի շատ բան, քան թէ սպասում էր։ Նոյն րոպէում հրամայեց նա ներքինիներին տանել բոլոր կնիկներին հարեմի միւս բաժնում և թողնել աստղագէտին միայնակ Սալիհայի հետ։

—Ես հեռանում եմ, ասաց նա աստղագէտին,—և յոյս ունեմ, որ դու կաշխատես շուտով աւարտելու քո դուշակութիւնները... և հաւատացած եմ, որ դու կը վարձատրվես քո բժշկութեան համար... աւելացրեց նա կծու ժպիտով և դուրս եկաւ հիւանդի սենեակից։

ՂԱՐԱԲԱՂԻ

ԱՍՏՂԱԳԷՏԸ

—

—Ինչու էք դուք, խանում, անձնատուր լինում յուսահատութեան, մէջ մտաւ աստղագէտը.—Ալլահը և սուրբ մարգարէն տնօրինել են ձեզ համար շուտափոյթ առողջութիւն...

—Ի՞նձ համար... պատասխանեց Սալիհան, աչքերը բարձրացնելով նրա վրա։

Այդ միջոցին աստղագէտը այնպիսի մի ճարպկութեամբ կարողացաւ իր աչքերի ու յօնքերի խորհրդաւոր շարժումներով նրան նշաններ ցոյց տալ, որ խանը ոչինչ չը նկատեց, միայն Սալիհան հասկացաւ։

—Այսպէս, ուրեմն դուք կարծում էք, շարունակեց հիւանդը, դառնալով դէպի խանը,—որ ես կարող եմ վստահ լինել այդ հաքիմի բժշկութեան վրա։

—Անտարակոյս։

—Երբ այդպէս է, մօտ եկէք, հաքիմ, դարձաւ նա դէպի աստղագէտը,—և ասեցէք, ես ինչ պիտի անեմ։

—Թոյլ տուեցէք ինձ, խանում, պատասխանեց աստղագէտը,—նախ հաշուել աստղների ընթացքը և որոշել այն աստղը, որը լուսաւորել է ձեր ծընընդեան րոպէն։

—Այդ որքան ժամանակ կը տեւի, հարցրեց Փանահ-խանը։

—Ժամանակը ճշդութեամբ ասել չեմ կարող, դա ինձանից կախված չէ, այլ սուրբ մարգարէի կամքից, պատասխանեց աստղագէտը։

—Իսկ այդ գուշակութիւնները, կարծեմ, կարելի է կատարել և իմ առանձին բնակարանում, խօսեց Փանահ-խանը։

—Ամենևին, խան, պատասխանեց աստղագէտը։

—Մոռանալ, միթէ այդ կարելի է... պատասխանեց Սալիհան խորին վրդովմունքով։

Բայց աստղագէտը խորհրդաւոր կերպով ակնարկեց նրան, նա հասկացաւ և փոխեց խօսքը.

—Մոռանալ... միթէ դուք կարծում էք, որ այդ լաւ կը լինի...

—Այդ կը փրկէ ձեզ, խանում, կը փարատէ ձեր հիւանդութիւնը և կը բախտաւորացնէ ձեզ։ Այդ ես պարզ տեսնում եմ այն բարի աստղներից, որոնք այժմ շրջապատում են ձեզ։ Ջուանշիրցիների հրամանատարի աստղը գտնվում է իր կատարեալ ծագման մէջ...

—Իսկ իմ զաւակները... ի սէր Ալլահի, ասեցէք, ինչ են անում իմ զաւակները... ինչու համար ինձ բաժանել են նրանցից...

—Հանգստացէք, խանում, ձեր զաւակները առողջ են և բախտաւոր։ Բայց նրանք կը լինեն աւելի բախտաւոր, երբ որ դուք կառողջանաք և դրանով կուրախացնէք խանին։ Ես հաւատացած եմ, որ նա յանձն կառնի տնօրինելու ձեր զաւակների բախտը։ Իսկ հիմա դառնանք դէպի ձեր հիւանդութիւնը։ Դուք զգում էք սաստիկ ջերմութիւն, այդպէս չէ՞։

—Խիստ սաստիկ։

—Լաւ, երբեմն ձեր գլխումը մտնում են մթին մտածութիւններ և դուք բոլորովին անձնատուր էք լինում այդ մտածութիւններին։

—Այո, ես տխրում եմ, տանջվում եմ, մեռնում եմ սրտիս ցաւերից...

—Ձեր սրտի ցաւը է հետևանք ձեր մտատանջութիւնների, և աւելի ոչինչ։ Ասեցէք, արդեօք զգո՞ւմ էք ձեր մէջ այնքան ուժ, որ կարողանաք ձիով ման դալ։

Այդ հարցման միջոցին աստղագէտը աչքերով նշան տուեց հիւանդին։

—Զգում եմ։

—Շատ լաւ, ձեզ հարկաւոր է թարմ օդ, խանում։ Մեկնեցէք դէպ ինձ ձեր ձեռքը։

Հիւանդը մեկնեց դէպի բժիշկը իր ձեռքը, և

XI

ԱՍՏՂԱԳԷՏԸ ԱՌԱՆՁՆԱՅԱԾ ՍԱԼԻՀԱՅԻ ՀԵՏ

Երբ որ ամենը հեռացան, աստղագէտը սկսեց նախ ուշադրութեամբ հետազօտել անեակի բոլոր անկիւնները, կասկածելով, որ կարող են լրտեսել նրա խօսակցութիւնը, յետոյ մօտեցաւ հիւանդի անկողնին, և գլուխը խոնարհեցնելով, հազիւ լսելի ձայնով ասաց.

— Դուք, խանում, անզգոյշ գտնվեցաք. պէտք չէր յայտնել ձեր ցանկութիւնը ինձ հետ խօսակցելու մասին... Ես ձեր ամենախոնարհ ստրուկն եմ... Այժմ պէտք է ուշադիր լինէք իմ խօսելուն, և ինչ որ ես ասելու կամ հարցնելու կը լինեմ, դուք պէտք է այնպէս ցոյց տաք, թէ ամեն բանում համաձայն էք ինձ հետ։ Ձեր ամուսինը՝ Ջումշուդը այստեղ է, շատ մօտիկ է, և նոյնպէս սիրում է ձեզ...

—Այստեղ, այստեղ, ի սէր Ալլահի...

Աստղագէտը նշանացի անելով, հասկացրեց նրան, որ լռէ, իսկ ինքը նստեց փոքր ինչ հեռու, զորգի վրա, սկսեց զանազան հարցումներ անել, թէ քանի տարեկան է, թէ նա ինչ մի առանձին դէպք է յիշում իր մանկութիւնից և այլն։ Բոլորը քննելով, վերջը աստիճանաբար հասաւ մինչև տիկնոջ տան և վեց տարեկան հասակը և հարցրեց.

—Այդ հասակում դուք շրջապատված էք եղել ամենաչար աստղերով. պէտք է, որ այդ ժամանակ մի որ և իցէ նշանաւոր դէպք պատահած լինի ձեզ։

—Այո, այո, բացականչեց Սալիհան,—ես այդ ժամանակ չափազանց երջանիկ էի...

—Երջանիկ, խանում, անկարելի է։

—Ի՞նչպէս չէ։

—Ի հարկէ չէ։ Այդ ձեզ այնպէս երևում էր միայն, իբր թէ երջանիկ էիք։ Բայց բոլորը, ինչ որ վայելում էիք այն ժամանակ, տանում էր ձեզ դէպի անբախտութիւն։ Պէտք է աշխատէք մոռանալու այդ...

—Մոռանալ, միթէ այդ կարելի է... պատասխանեց Սալիհան խորին վրդովմունքով։

Բայց աստղագէտը խորհրդաւոր կերպով ակնարկեց նրան, նա հասկացաւ և փոխեց խօսքը.

—Մոռանալ... միթէ դուք կարծում էք, որ այդ լաւ կը լինի...

—Այդ կը փրկէ ձեզ, խանում, կը փարատէ ձեր հիւանդութիւնը և կը բախտաւորացնէ ձեզ։ Այդ ես պարզ տեսնում եմ այն բարի աստղներից, որոնք այժմ շրջապատում են ձեզ։ Ջուանշիրցիների հրամանատարի աստղը գտնվում է իր կատարեալ ծագման մէջ...

—Իսկ իմ զաւակները... ի սէր Ալլահի, ասեցէք, ինչ են անում իմ զաւակները... ինչու համար ինձ բաժանել են նրանցից...

—Հանգստացէք, խանում, ձեր զաւակները առողջ են և բախտաւոր։ Բայց նրանք կը լինեն աւելի բախտաւոր, երբ որ դուք կառողջանաք և դրանով կուրախացնէք խանին։ Ես հաւատացած եմ, որ նա յանձն կառնի տնօրինելու ձեր զաւակների բախտը։ Իսկ հիմա դառնանք դէպի ձեր հիւանդութիւնը։ Դուք զգում էք սաստիկ ջերմութիւն, այդպէս չէ՞։

—Խիստ սաստիկ։

—Լաւ, երբեմն ձեր գլխումը մտնում են մթին մտածութիւններ և դուք բոլորովին անձնատուր էք լինում այդ մտածութիւններին։

—Այո, ես տխրում եմ, տանջվում եմ, մեռնում եմ սրտիս ցաւերից...

—Ձեր սրտի ցաւը է հետևանք ձեր մտատանջութիւնների, և աւելի ոչինչ։ Ասեցէք, արդեօք զգո՞ւմ էք ձեր մէջ այնքան ուժ, որ կարողանաք ձիով ման դալ։

Այդ հարցման միջոցին աստղագէտը աչքերով նշան տուեց հիւանդին։

—Զգում եմ։

—Շատ լաւ, ձեզ հարկաւոր է թարմ օդ, խանում։ Մեկնեցէք դէպ ինձ ձեր ձեռքը։

Հիւանդը մեկնեց դէպի բժիշկը իր ձեռքը, և

տական, բամանական էր, միմիայն մի նեղ շրջանի համար այլ և այլ պատճառներով դուրեկան, իսկ մեծամասնութեան համար անհասկանալի, և վերջապես 4) տեղերը շատ թանգ էին։

Ի՞նչ հիմքեր կային, ուրեմն որ գործը տևողական լիներ։

Աւելացրէք սրան թատրոնական վարիչների անխնայողաղան և անհաշիւ գործունէութիւնը, յիշեցէք որ նրանք նախ հաւաքեցին 8 հազար ռուբլ հասարակութիւնից, ունեցան բացի սրանից իւրաքանչիւր տարի միջին թւով 20 հազար ռուբլ արդիւնք և այդ երեք տարվայ ժամանակամիջոցում քամեցին առ նուազն 70 հազար ռուբլ այլ և այլ ծախսերի վրա, առանց մի որ և է կապիտալ կազմելու, ոչ փողով, ոչ կոստիւմներով, ոչ դեկորացիաներով...

Աւելացրէք սրան որ նոյն նեղ շրջանը, որ այդքան փող տուեց թատրոնը պահպանելու համար, բացի սրանից հազարներ ծախսեց դերասանուհիների և դերասանների այլ և այլ ընծաների վրա,—և ձեզ հասկանալի կը լինի որ այդ նեղ շրջանը դադրած, յոգնած է իր ապարդիւն և անհաշիւ, ՉԻԲԵՐԸ ԴԱՐԴԱԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆից և այժմ այլ ևս սիրտ չունի գնալ թատրոն, երբ մանաւանդ այդ թատրոնը սկսեց նորից ներկայացնել աւելի համեստ, աւելի բնական պիէսաները և խումբը զրկվեց այն կծու տարրից, պօլսական գեղեցկուհիներից, որոնք ինչպէս Թունդ համեմ կեարեկուրի մէջ, ինչպէս մանիս դրաւում էին մեր սակաւաթիւ ինտելիգենտ հասարակութիւնը դէպի թատրոնը։

Բայց ժողովրդական դառնալ մեծամասնութիւնը գրաւել՝ խաղով, ըէպերտուարով, էժան գներով,—մեր թատրոնը երբէք փորձած չէ։

Քանի որ թատրոնը չի աշխատի դառնալ մեծամասնութեան համար անհրաժեշտ, բայց համեստ զուարճութեան մի միջոց, նոյն իսկ այդ մեծամասնութեան իրան համար անդիտակցական կերպով մի կրթիչ հիմնարկութիւն, մի դպրոց, այլ կը լինի միմիայն մի նեղ շրջանի համար հեշտասիրութեան և ժամավաճառութեան մի տեղ,—թատրոնը երբէք չի դառնայ մի տևողական, ինքն իրան պահպանող, հաստատ հիմնարկութիւն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

Սեպտեմբերի 27-ին

Զարմանալի է, որ ս. Փրկիչ եկեղեցու երեսփոխանի ընտրութիւնը ուղարկված է կոնսիստորիայի հաստատութեանը. թէ ինչ պատճառով կոնսիստորիան չէ վաւերացնում ընտրութիւնը, մեզ յայտնի չէ, միայն հետևանքն զգալի է. ա) հին երեսփոխան պ. Բ...եանի վրա եկեղեցական 9000 ռուբլի ապառիկները ընդունող չը կայ, մինչդեռ նա առաջարկում է իր կալուածքները. բ) պարոն Վանցեանի հաշիւները նոյնպէս խճճված մնացել են, նոյն դրութեան գուցէ հասնեն երեսփոխանի ներկայ պաշտօնակատարների հաշիւները, որ մի տարուց աւելի է հասարակութիւնը չէ ուզում ընդունել, մինչև նոր երեսփոխանի հաստատութիւնը. գ) եկեղեցական կալուածքները քանդվում են, նորոգող չը կայ. նոյնպէս կասկածելի է Կարապետեան ուսումնարանի հին շինութիւնը. դ) հին քաղաքում եկեղեցապատկան տներից մի երկուսը կարկատելու է Լուսաւորչեան օրիորդական ուսումնարանի համար, (նոր բացվելիք), մի այդպիսի ձեռնարկութիւն հոգաբարձութիւնը դժուարանում է իրագործել առանց երեսփոխանի։

Մեր ուսումնարաններում կանոնաւոր դասաւանդութիւնը դեռ սկսված չէ, չնորհիւ պ. Թեմական վերատեսչի կարգադրութեան, որը մինչև հիմայ մեր ուսուցիչների չտանները կազմած և ուղարկած չէ. իսկ ուսուցիչները, պարզ բան է, որ սեպտեմբերի սկզբից ստանալու են իրանց ռոճիկները. այնու ամենայնիւ մենք վստահ ենք, որ նոր, թարմ ոյժերով կազմակերպվելիք ուսուցչական խումբը, իր տոկուն եռանդով լրացնելու է ապարդիւն անցկացած ամիսը։ Մի քանի խօսք էլ հայ-կաթոլիկների վէճի մասին, որ հաւաքել եմ իսկական աղբիւրներից։ 1829—30 թուականներին երբ Կարնոյ ժողովուրդը գաղթում է Ախալցխայ (որոնց հետ 200 ծուխ հայ-կաթոլիկներ), սկզբում տեղաւորվում են հին քաղաքում, Ռապատ ասված թաղում. բնիկ-վրացախօս հայ-կաթոլիկները թիւրքաց տիրապետութեան ժամանակից ունեցել են երեք կաթոլիկ եկեղեցիներ, որոց երկուսի մէջ (սբ. Խաչ և սբ. Յովհաննէս) եկեղեցական ժամերգութիւնները և պատարագը կատարվում էին հայերէն *). իսկ երրորդում լատիներէն (իսկ այժմ և վրացերէն)։ Գաղթական հայ-կաթոլիկները աչքի առաջ ունենալով նիւթականի սուղ միջոցը, ի սկզբան հրաժարվում են տէրութեան առաջարկած հողի վրա նոր եկեղեցի կառուցանելուց, համարելով բնիկների եկեղեցիք, ազգային կաթոլիկ-եկեղեցիք. բայց է վերջոյ վրացախօս-կաթոլիկների դէպի գաղթականներն ունեցած հակակրութիւնը ու անհիւրասիրութիւնը ստիպում են վերջիններին խնդրել տէրութիւնից նոր եկեղեցի շինելու իրաւունքը, ըստ կղզում առաջարկած հողի վրա։ Ստանալով այդ իրաւունքը, սրանք հին քաղաքից գաղթում են նորը և այստեղ հիմնում սբ. Վերափոխման եկեղեցին, (33—34 թուականներին)։ Ահա համարեա այդ միջոցից սկսվում է սառնութիւնը երկու տարբեր լեզու հայ-կաթոլիկների մէջ։ 1875 թուականից մի քանի հարուստ վրացախօս հայ-կաթոլիկներ հաստատում են իրանց բնակութիւնները նոր քաղաքում և պահանջում են մի վրացախօս քահանայ ունենալ Վերափոխման եկեղեցում. գաղթականները հակառակում են այդ պահանջին,—թէ վրացախօս քահանայ մեր եկեղեցում չենք ընդունում. ժողովուրդը բաժանվում է երկու հակառակ կուսակցութեան. հայր Շ...եան յաջողում է կատարել վրացախօսների ցանկութիւնը, մի վրացախօս երիտասարդ հետն առած դիմում է Սարատովի լատին եպիսկոպոսին և ձեռնադրել է տալիս սբ. Վերափոխման եկեղեցու անունով քահանայ վրացախօս հայ-կաթոլիկների համար. գաղթականների անձնասիրութեանը մի ծանր հարուած էր այս. (նոքա համարեա ցրվում են եկեղեցուց, երբ Աւետարանը հայերէն կարդալէն վերջը, նորընծայ, վիրախօս հայր Անտոն Յակոբեանը կրկնում է վրացերէն.) իսկ վրացախօսները միրտ առած առաջին յաջողութիւնից, առաջարկում են մի երեսփոխան էլ ընտրել իրանցից. հայախօսները ընդդիմանում են, երկու կողմն էլ խնդիր են ուղարկում Սարատովի լատին եպիսկոպոսը առանց հետևանքի թողնելով գաղթականների խնդիրը, հրամայում է տեղական կաթոլիկ կառավարութեանը յարգել վրացախօսների ցանկութիւնը, ուստի բնիկները ընտրում են իրանցից մի երեսփոխան, իսկ գաղթականները չէղոք են մնում ընտրութիւնից։ Կաթոլիկ հոգևոր կառավարութիւնը հրամայում է գաղթական համայնքին որ իրանցից ևս ընտրեն մի այլ երեսփոխան. նոքա ուշադրութիւն չը դարձնելով այդ հրամանին, մի հարց են առաջարկում կաթոլիկ հոգևոր կառավարութեանը,—թէ ինչ ազգ են այդ վրացախօսները. կառավարութիւնը պատասխանում է թէ դրանք վրացախօս հայ-կաթոլիկներ են, յայտարարելով թէ Կովկասում կան երեք տեսակ հայ-կաթոլիկներ՝ հայախօս, վրացախօս, թրքախօս, և կրկին առաջարկում է հայախօս կաթոլիկ երեսփոխանի ընտրութիւնը, այն պայմանով, որ երկու երեսփոխանները կունենան համահաւասար իրաւունք, մատեանները գրվելու են հայերէն և պահվելու եկեղեցում։ Երէկվայ օրը գաղթական հայ-կաթոլիկների ժողովում վիճաբանութիւններից յետոյ վճռել են նորից դրական բացատրութիւն պահանջել տեղական, կաթոլիկ հոգևոր կառավարութիւնից,—չը խառնել ազգութիւնը կրօնքի հետ. եթէ վրացախօսները հայ են, ուրեմն ինչ հարկ վրացախօս երեսփոխան ընտրելու, քանի որ մի եկեղեցու համար ընտրվում է մի երեսփոխան իր ժողովրդի ձայնի առաւելութեամբ. իսկ եթէ նրանք վրացի են, ուրեմն չունեն իրաւունք միջամտելու և դեղծելու մեր ազգային դարաւոր արտօնութիւնները և կարգ ու կանոնները։ Ահա այս դրութեան մէջ է նրանց վէճը։

***

*) Ինչպէս առաջ, նոյնպէս այժմ նոյն եկեղեցիներում ժամերգութիւնը հայերէն է, միմիայն Աւետարանը կրկնում են վրացերէն, չը նայելով որ մեծամասնութիւնը ժողովրդի չէ հասկանում հայերէն, որովհետև նրանք վրացախօս բնիկներ են։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հանգուցեալ արքայազն իշխանուհի Մարիամ Խաչակեանի այգը կատարվելու է այսօր, նրա սեփական տանը, 6 ժամին երեկոյեան։

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են հետևեալը։ «Սեպտեմբերի 26-ին վախճանվեցաւ այստեղ Ղազա-

---

նա ցոյց տալով, իբր թէ չօշափում է նրա երակը, հաղիւ լսելի ձայնով ասաց. «Ականջ դրեցէք ինձ և դուք աղատված կը լինէք։»

Յետոյ նա նստեց սենեակի մէջտեղը, գրպանից դուրս հանեց իր ՂԸՎԻԹ-ՂԱԼԱՄԸ և եղջնեայ գրիչը, սկսեց աստղաբաշխական հաշուումներ անել։ Սալիհան հետաքրքրութեամբ նայում էր նրա դէմքի ծիծաղելի ծամածռութիւնների վրա, որ անում էր նա իր գործողութիւնները կատարելու ժամանակ։ Նա ուրախութեամբ կը ցանկանար ընդհատել աստղագէտի պարապմունքը, և իր սիրելի Զուսշուղի մասին տեղեկութիւններ հարցնել, բայց վախենալով, մի գուցէ իր հարցուփորձով խանդարէր նրան, այդ պատճառով լռեց։ Բայց աստղագէտը խորասուզված էր իր գործի մէջ. ուշադրութեամբ քննում էր բոլորակները և զանազան գծերը, որ գրել էր Թղթի վրա, մի և նոյն ժամանակ ինքն իրան մի առանձին ծանրութեամբ խօսում էր.

«Շատ գեղեցիկ... ծննդեան աստղը մօտենում է... նա ընթանում է աւելի բարձր և բարձր... նա կանգնեց... հասկանում եմ, առաւօտը դեռ խիստ վաղ է... դէպի աջ կողմը՝ աստղերները բարեյաջող են... դէպի ներքև՝ մէկը ՁԼասակար է... բայց ես գիտեմ, թէ երբ է ծագում նա, կարելի է դրանից խոյս տալ... ուղիղ կանգնած է մի աստղ, որ մեծ խոչնդոտ կարող է լինել... բայց ահա ձին... նա ազատված է... այդ չափազանց լաւ է... Այդ ինչ փայլուն աստղ է, հա, դա խանի աստղն է... որքան երջանիկ է նա... ինչ փառք է շրջապատում նրան... Նա այնքան պայծառ փայլում է, որ նայել անկարելի է նրա վրա... զարմանալի է... խանումը կատարելապէս կառողջանայ, եթէ խոյս կը տայ այդ աստղի ազդեցութիւնից... Ահա, մի ինչ որ խորասնի աստղ է վազում հորիզոնի վրա... նա վազում է բռնելու խանումի աստղին.—ահա նրանք զարկվեցան միմեանց... խանումի աստղը հրճուանքի մէջ է... և...

—Կարելի է վերջապէս ներս մտնել, հարցրեց Փանահ-խանը, որը դրսից ծածուկ կերպով ականջ էր դնում նրանց ամբողջ խօսակցութեանը, որովհետև վստահութիւն չունէր աստղաբաշխի վրա։

Աստղագէտը վեր թռաւ գորգի վրայից, ասելով.

—Համեցէք, խան, միայն ի սէր Ալլահի, աջ ոտքով և ներս մտնելուց յետոյ երեք անգամ թքեցէք դէպի ձախ կողմը։

Սնահաւատ խանը կատարեց նրա պատուիրները, ներս մտաւ, հարցնելով.

—Հիմա ասա, առողջացնելու յոյս ունես։

—Մեծ յոյս ունեմ, պատասխանեց աստղագէտը.—խանումի հիւանդութիւնը բոլորովին կանցնի մի հաֆթայի ընթացքում, եթէ դուք, խան, չնորհ կանէք կատարելու իմ տուած խորհուրդները։

—Ասա, ինչ խորհուրդներ։

—Նախ, երեք օր շարունակ, արևի ծագելուց առաջ, խանումը պէտք է խմէ մի-մի բաժակ ջուր այն առուակից, որը հոսում է դէպի աջ կողմը։

—Այդ հեշտ բան է։ Շարունակեցէք...

—Վեց օր շարունակ նա պէտք է ձիով գնայ այն լեռան վրա, որը գտնվում է աջ կողմում։ Այդ զբօսանքը կատարելու համար նա պէտք է նստած լինի ձեր ամենալաւ և արագընթաց նժոյգներից մէկի վրա։ Ճանապարհ ընկնելու ժամանակը պէտք է նշանակվի ամեն օր արեգակի առաջին ճառագայթը ծագելու րոպէում։ Երբ որ խանումը կը հասնի այնտեղ, լեռան վրա, պէտք է ձիուց ցած իջնի, և երեսը դարձնելով դէպի Մեքքայի կողմը, պէտք է անգիր կարդայ մի քանի զլուխներ զօրանից։ Յետոյ կրկին պիտի նստի ձիու վրա և վերադառնայ տուն։ Խանումը պէտք է ծածկված լինի չադրայի մէջ, և դէմքը քողարկած երեսակալով։ Եւ ոչ ոք այդ զբօսանքները կատարելու ժամանակ չի պիտի ուղեկցէ նրան։

—Ի՞նչպէս թէ ոչ ոք, զոչեց խանը տհաճութեամբ.—երևի, դու ցնորքների մէջ ես գտնվում, աստղագէտ։

—Երդվում եմ ձեր մօրուքով, խան, որ ես խօսում եմ ճշմարիտը։ Ամեն մի տղամարդ, որ կուղեկցէ նրան, կը լինի պատճառ նրա կորստեանը։ Որովհետև, իմ յիշած ամբողջ վեց օրերի ընթացքում խանումի աստղը պիտի փայլի ամենապայծառ կերպով, բայց հէնց որ նրան կը մօտենայ տղամարդի աստղը, այդ ժամանակ տիկնոջ աստղը իսկոյն կը նսեմանայ։

—Իսկ ներքինիներ։

—Այդ կիսամարդիկը նրա հիւանդութիւնը կը դարձնեն բոլորովին անբուժելի։

—Բայց դու գժվել ես, աստղագէտ, խօսեց խանը փոքր ինչ բարկացած կերպով։—Ինչպէս կարելի է թոյլ տալ կնոջը միայնակ զբօսանք կատարել այդքան հեռաւոր տարածութեան վրա։ Դա անկարելի է. մեր սովորութիւններին հակառակ է այդ։

—Ամենակարող խան, ես յայտնեցի ձեզ այն, ինչ որ ցոյց տուեց ինձ իմ խորին գիտութիւնը, որը ունեմ ես երկնային լուսատուների մասին, և որոնք կանխապէս սահմանում են մարդկային ճակատագիրը։ Իսկ դուք չէք կամենում լսել ինձ, այդ ձեր կամքն է։

Փանահ-խանը մնաց շուարած դրութեան մէջ. չը գիտէր ինչ վճռել։ Իրան յատուկ կասկածամտութիւնը կռւում էր նրա սրտում, մի կողմից, անհաւատութեան հետ, որով դժուարանում էր նա չը հաւատալ աստղագէտի խօսքերին, իսկ միւս կողմից, այն ցանկութեան հետ, որով կամենում էր տեսնել Սալիհային կատարելապէս առողջացած։ Երկար ժամանակ լռական լինելով պարսիկների մէջ, նա սովորած էր հաւատալ աստղագէտների գուշակութիւններին, և նրանց խորհուրդների համեմատ կարգադրել իր գործերը։ Բայց այդ աստղագէտի պահանջները այն աստիճան օտարոտի էին, որ նա չը գիտէր, թէ ինչ պէտք է անել։ Աստղագէտը, նկատելով նրա մըտատանջութիւնը, խօսեց.

—Թոյլ տուեցէք, ամենազօր խան, ձեր ստրուկին ասել, որ ես ոչ մի պատճառ չունեմ ձեզ խաբելու։ Ինձ յայտնի է ձեր ամենակարողութիւնը, որով պատժել կարող էք խաբեբային։ Ինձ յայտնի է և ձեր առատաձեռնութիւնը դէպի այն մարդիկը, որոնք կը կատարեն ձեր ցանկութիւնները և որոնք կարդարացնեն ձեր յոյսերը։ Ես կը մնամ այստեղ մինչև այն ժամանակ, երբ խանումը կատարելապէս կառողջանայ։ Եւ այն ժամանակ դուք կը տեսնէք, խան, որ սուրբ Ալիի կամեցողութեամբն է եղել, որ ինձ ուղարկել է այստեղ, որպէս զի իմ ձեռքով փարատվի այն տրամութիւնը, որը տիրում է ձեր ամուսնի վրա։ (Եւ թող բազմապատկէ Ալլահը նրա բախտաւորութիւնը, և թող երկարացնէ նրա կեանքը այնքան ժամանակ, որ նա կարողանայ տեսնել իր ժառանգներին մինչև եօթներորդ սերունդը)։ Ես գիտեմ, թէ որպիսի ընծաների կարժանանամ և որպէս կը վարձատրէ ինձ իշխողներից ամենամեծը՝ Զուանշիրցիների խանը (որի դէմքը թող յաւիտեան փայլի փառքի և վեհութեան պայծառութեամբ)։

Փանահ-խանը կատարելապէս հրապուրվեցաւ աստղագէտի խորամանկ ճառից։ Նրան աւելի դրաւեց գիտնականի անկեղծ ուրախութիւնը, որը արտայայտվում էր նրա դէմքի վրա, երբ խօսում էր իր ստանալիք ապագայ ընծաների մասին։

—Ես համաձայն եմ, ասաց նա,—էգուցվայ օրից կը սկսենք Սալիհային բժշկելու կարգադրութիւնները։

Յետոյ մօտեցաւ հիւանդին, բայց նա, կամենալով խոյս տալ անտանելի բռնակալի ներկայութիւնից, ձեացրեց իրան իբր թէ քնած է։ Խանը կրկին կանչել տուեց իր կնիկներին և ներքինիներին իրանց տեղում, և ինքը աստղագէտի հետ հեռացաւ։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՎԵՐՋը

բոս Իզմիրլեանց 120 տարեկան հասակում։ Հանգուցեալը չը նայելով, որ յետին աղքատութեան մէջ էր, երբէք չէր հիւանդացել։ Նա թողել է մի քանի թոռներ։ Այդպիսի երեւոյթները բացառութիւն են կազմում, որովհետեւ առանց առողջապահական պահանջները կատարելու, դժուար է ընդդիմանալ ցրտին, տօթին, խոնաւութեանը, այլ և այլ պատահարներին 120 տարվայ ընթացքում։ Հանգուցեալի որդին սրանից մի 20 տարի առաջ վախճանվեցաւ, թողնելով կին և որդիք, որոնց նոյնպէս կառավարում էր հանգուցեալ ծերունին»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում հետեւեալը։ «Մեր քաղաքըն եկաւ մի նոր ֆրանսիական ընկերութիւն, որ սկսել է նաւթահանքեր փորել Բինաղադում, Փութայում և Ալիադում։ Վերջին երկու տեղերը գտնվում են Բագու-Թիֆլիսեան երկաթուղու գծի Սալիանի ճանապարհի վրա, իսկ առաջինը ընկնում է արեւմտեան-հիւսիսային կողմը, մօտ 8 վերստ հեռաւորութեամբ։ Այդ տեղերում դեռ ոչ ոք նաւթահանք երբէք չէ փորել։ Հայ նաւթագործները, որոնք չեն կարողանում մրցել Նոբելի հետ, աւելի էլ անկարող կը լինեն մրցել այդ նոր ֆրանսիական ընկերութեան հետ, որ շատ ուժեղ է երեւում»։

—

Պ. Գրիգոր Ալինաց ուղարկել է մեզ հետեւեալ նկատողութիւնը մեր լրագրում տպելու համար։ Թիֆլիսի արհեստագլխի թոյլատրութեամբ քաղաքիս կանանց չորերի դերձակները բաժանվեցան տղամարդկանց չորերի դերձակներից և առանձին համքարութիւն կազմեցին, որով կրկնապատկվեցան համքարային տուրքերը։ Բաժանումը կչի ունեցող պատճառներ չունէր և դրա համար մենք աշխատում էինք համոզել դերձակներին, որ յետ կենան իրանց այդ մտքի իրագործելուց և բաւականան նրանով, որ դերձակների կառավարչի համար մի օգնական ընտրեն կանանց զգեստները կարող դերձակներից և նրա նախագահութեամբ իրանց արհեստի վերաբերեալ հարցերը վճռեն։ Բայց մեր աշխատանքը անհետեւանք մնաց. նրանք երկու խմբի բաժանվեցան։ Եւ ահա սեպտեմբերի 28-ին տեղի ունեցաւ կանանց զգեստները կարող դերձակների համքարային ժողովը, որտեղ համքարի կառավարիչ պ. Կավալէնկօ յայտնեց համքարային տուրքերի չափը, որ ինչպէս չատերին, նոյնպէս և ինձ չափազանց թվաց։ Եղան քանի մի բողոքներ ժողովի ժամանակ։ Այնուամենայնիւ մեզ թոյլ ենք տալիս կարծելու որ այդպիսի տուրքերով դժուար պիտի լինի կառավարել մի համքարային վարչութիւն, ինչքան էլ չափաւորված լինեն նրա ծախսերը։ Առանց նշանաւոր պատճառի այդպիսի նոր նոր համքարութիւններ կազմելը իր վնասակար կողմերն ունի, որոնցից մինն էլ այն է, թէ աւելանում է խեղճ արհեստաւորի ծախսը և հետեւապէս թանդանում ազգաբնակութեան ապրուստը։ Ինչ հետանքի կամ եզրակացութիւնների հասաւ սեպտեմբերի 28-ի նիստը, դժուար է ասել, քանի որ վիճաբանութիւնները չատ անորոշ էին և կառավարիչ պ. Կավալէնկօն չատ թոյլ կերպով էր նախագահում նիստին»։

—

Ռուս «Страна» շաբաթաթերթի թղթակիցը գրում է հետեւեալը։ «Մենք, Բագուի բնակիչներս, դեռ ևս մօտիկ ժամանակում վկայ էինք որքան անձնուիրութեամբ ռուս բժիշկ կանայք գործում էին անդրկասպեան զօրքի մէջ, որ առաջնորդում էր հանգուցեալ գեներալ Սկոբելեւ։ Դեռ այս օրերս մենք զմայւորում էինք այդ աշխատող կանանց, որոնք ծանր աշխատանքից թուլացած, մաշված, վերադառնում էին Տէկինեան անապատներից. նրանց անձնուէր աշխատանքները ամենից լաւ կարող է գնահատել ռուս զինուորը, ռուս սօլդատը և նրանց արածը կարձանագրի պատմութիւնը։ Անջնջելի է այն տպաւորութիւնը որ գործեցին մեզ, ակամատեսներիս վրա, բժիշկ-կանայք։ Զարմանալի չէ, որ բազուցիք վճռեցին օգնել Ս. Պետերբուրգի կանանց բժշկական կուրսերին ոչ թէ խօսքով, այլ գործով։ Տեղական լրագիրների խմբագրութիւնների մէջ արդէն բացված է ստորագրութիւնը կանանց բժշկական կուրսերի դրամագլխի համար։ Սկզբնաւորութիւնը նայելով հանգանակութիւնը աջող է գնում։ Բացի սրանից զիտաւորութիւն կայ առաջարկութիւն անել Բագուի կլուբի անդամներին իւրաքանչիւր թղթի խաղից պարտաւորապէս 20 կոպէկ նուիրել կանանց բժշկական կուրսերի օգտին և մի տուփ դնել կլուբի բնակարանում, որի մէջ կը հանգանակվեն կամաւոր նուէրներ նոյն նպատակին։»

—

«Семья и Школа» շաբաթաթերթի մէջ մի ժողովրդական դպրոցի ուսուցիչ առաջարկութիւն է անում որ զէմստվոները և մամուլի թղթակիցները հաւաքեն վիճակագրական տեղեկութիւններ իրանց տեղերի ժողովրդական լուսաւորութեան մասին։ Այդ առաջարկութիւնը ուշադրութեան արժանի է, մանաւանդ որ յարգելի յօդուածագիրը իր առաջարկութեան հետ միացնում է և մի մանրամասն ծրագիր, թէ ինչ ձեւով պէտք է հաւաքվեն այդ տեսակ վիճակագրական տեղեկութիւններ։

—

Այս օրերս երևացաւ «С.-Петерб. Вѣд.» լրագրում մի թղթակցութիւն Թիֆլիսից։ Ինչպէս երևում է այդ թղթակցութիւնը նոյն անձն է գրել, որ մի քանի օր առաջ գրել է նոյն լրագրում հայերի մէջ բողոքականութեան տարածման վրա յօդուածը, որովհետև երկու յօդուածներն էլ նոյն տառով են ստորագրված։ Այս անգամ թղթակիցը խօսում է մեր քաղաքային, բանկային և այլ գործողների վրա։ Քանի մի օր է այդ թղթակցութիւնը խօսակցութեան առարկայ է դարձել Թիֆլիսում։

—

Հայոց թատրոնական խումբը Թիֆլիսում, որ այժմ բաղկացած է միմիայն տեղացիներից, քանի որ Կ. Պոլսի հիւրերը արդէն հեռացան նրանից, առժամանակ խաղում է Արծրունու թատրոնում, բայց շատ անհաջող եկամուտներ ունի։ Լսում ենք որ գանվել են մարդիկ, որոնք գանգատվում են թէ թատրոնի վարձը, 60 ռուբլ թանգ է։ Անենք թէ թատրոնի տէրը այդ գումարից մի 10 ռուբլ պակասեցնէր (աւելին խօ անհնարին է պակասեցնել, քանի որ 50 ռուբլ, առանց վառելափայտի, նոյն իսկ գիշերվայ ծախս է),—բայց ինչ կօգնէր խմբին մի 10 ռուբլ, երբ դանվում, որ կարող է հասարակ գներով 400 ռուբլ գիշերվայ եկամուտ տալ, 300 ռուբլ գումարի տեղերը դարդակ են մնում, իսկ 100 ռուբլ գումարի միայն բռնված են տեղերը։ Նշանակում է որ հասարակութիւնը գործին չէ համակրում։ Եթէ հասարակութիւնը համակրէր թատրոնին, փոխանակ պահանջել որ թատրոնական դահլիճի այնպէս էլ էժան վարձը տաս ռուբլով պակասեցնեն, բաւական կը լինէր որ ամեն երեկոյ տաս մարդ աւելի դային, որոնք վերցնելով մի մի ռուբլանոց տոմսակ, այն տաս ռուբլ կը տային կասային, որ մի քանիների կարծիքով պէտք է իրանից վճարէր թատրոնի տէրը։ Եթէ բանը այնտեղ հասաւ որ հայոց թատրոնը պահպանելու համար տաս ռուբլն էլ դեր է խաղում, այն ինչ անցեալ տարիներում անհաշիւ կերպով հազարներ և հազարներ էին չպրտում նոյն թատրոնի համար, ուրեմն, ինչպէս ասում են, հայոց թատրոնի բանը չլոր է։ Ուրիշները, որոնք իրանց աւելի խորամիտ են ձեւացնում, ասում են. «երևի հասարակութիւնը Արծրունու թատրոնը չէ սիրում։» Շատ կարելի է, կը պատասխանենք մենք։ Բայց ինչիցն է այդ, որ երբ որ նոյն Արծրունու թատրոնում օրիորդ Ղորղանեան էր երգում, կամ ձեռնածու Լէնց էր ներկայացնում, կամ վրաց խումբը էժանացած գներով էր խաղում, նոյն Արծրունու թատրոնը հասարակութիւնը չատ էր սիրում և թատրոնում ասեղ գցելու տեղ չը կար։ Չը պէտք է մոռանանք որ վրաց ներկայացումներին էլ հասարակութեան զրեթէ կէսը հայերից բաղկացած է լինում։ Ուրեմն պատճառները այլ են և մենք աշխատում ենք նրանց բացատրել մեր ներկայ համարի առաջնորդող յօդուածում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բերլինի «Post» լրագրին Փարիզից հեռագրում են հոկտեմբերի 9-ին։ Հրդեհաշէջների զընդապետ Ֆրուադէվօի այսօրվայ թաղումը, որը սպանվեցաւ Նորերումս պատահած մի մեծ հրդեհ հանգցնելու ժամանակ, փառաւոր և սրտաշարժ տեսարան էր ներկայացնում։ Փարիզի կէսը ներկայ էր այդ թաղմանը և դրանով ֆրանսիացիք արժանաւոր կերպով վերջին յարգանքը մատուցին այն մարդուն, որը ընկաւ իր պարտքը անձնազոհութեամբ կատարելու ժամանակ։ Այդ մեծահանդէս թաղմանը մասնակցում էին մինիստր նախագահ Դիւկլէրկ, Բիլիօ և Ֆոլիէր գեներալները, Պիտիէ գեներալը, որպէս հանրապետութեան նախագահի ներկայացուցիչ, Սենայի զինուորական պրէֆէկտը, պոլիցիայի գլխաւորը, Փարիզի քաղաքային վարչութիւնը, սենատորներ, պատգամաւորներ և Փարիզի պահապան զօրքի մօտ հարիւր զեներալներ և օֆիցերներ, բոլորը հանդիսաւոր հագուստներով։ Թաղմանը նոյնպէս ներկայ էին օտար պետութիւնների դեսպանատների զինուորական գործակատարները։ Փարիզի արքեպիսկոպոս, կարդինալ Գիբեր, ինքն էր կամենում հանգուցեալի դագաղի վրա վերջին խօսքն ասել, բայց հիւանդութեան պատճառով ստիպվեցաւ հրաժարվել իր դիտաւորութիւնից։

—«Pester Lloyd» լրագրին Հռօմից հաղորդում են, որ սեպտեմբերի 28-ին այնտեղ ժամանեց մի մեծատուն անձն ծպտեալ կերպով և իշաւ Իշխան Մասսիմօի մօտ. միւս օրը նա ընդունվեցաւ դաղտնի կերպով պապի մօտ, իսկ սեպտեմբերի 30-ին կրկին դուրս եկաւ Հռօմից։ Կարծում էին, թէ այդ մարդը կոմս Շամբօրն է։ Բայց աւելի հիմնաւոր տեղեկութիւնների համեմատ, յայտնվում է, որ դաղտնի այցելուն Փարիզեան կոմսն էր, որը եկել էր Հռօմ պապին հաղորդելու համար, որ կոմս Շամբօրը նրան է յանձնել իր բոլոր իրաւունքները Ֆրանսիայի թագի վրա։

—«Journal de Genève» լրագիրը , որ, ինչպէս ասում են, մօտիկ յարաբերութիւններ ունի նախկին մինիստր-նախագահ Ֆրէյսինէի հետ, այս օրերս իր էջերի մէջ մէկ հետաքրքիր հաչիւ տպեց իր թղթակցի տեսակցութեան մասին Ֆրէյսինէի հետ։ Այդ հաչիւ մէջ, ի միջի այլոց, ասվում է, որ Ֆրէյսինէ այն կարծիքի է, թէ Դիւկլէրկի մինիստրութիւնը չուտով կընկնի Գամբէտտայի հարուածների տակ։ Չը նայելով դրան, այնու ամենայնիւ, Գամբէտտայի յաղթութիւնը դեռ ևս չատ հեռու է, որովհետև ընտրողները այժմ էլ նոյնպէս չեն համակրում նրա ընտրողական սիստեմին, որպէս և 10 ամիս առաջ։ Շատ ժամանակ չը կայ, որ մէկ բաւական ազդեցութիւն ունեցող պատգամաւոր նկատեց. «Եթէ որ մենք, մինչև ներկայ օրինդրական սէսիայի վերջը, սափված լինենք մէկ ամբողջ դուժին մինիստրութիւններ փոխել, մենք աւելի ուրախութեամբ պատրաստ ենք այդ բոլոր ճգնաժամերին համբերել, քան թէ նախկին մեծ մինիստրութեան առաջնորդի դիրքն ընկնել։ Ֆրանսիայում միշտ գտնվել են մինիստրներ։ Ցուցակներով ընտրութիւնների սիստեման ունի իր լաւ կողմերը, բայց միայն... առանց Գամբէտտայի։ Երբ որ նա կը մեռնի, այն ժամանակ կարելի կը լինի մտածել ընտրութիւնների այդ սիստեման մացնելու մասին հանրապետութեան մէջ։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՄՕՍԿՎԱ, 7 հոկտեմբերի։ Այսօր Կայսր Ալէքսանդր II-ի արձանը կառուցանելու համար նշանակված մասնաժողովը լսեց էկսպերտների զեկուցումն։ Նախագիծներից մէկը կատարելապէս բաւականացուցիչ է համարված։ Մնացածներից չորս ամենալաւերը պրիմիաներ ստացան։

ԿԻԵՎ, 7 հոկտեմբերի։ Հարաւ-արևմտեան ճանապարհները, կազատինի մօտ, ձիւնի կոյտերով են ծածկված։ Նաւագնացութիւնը Դնեպր գետի վրա շարունակվում է։

ՕԴԷՍՍԱ, 7 հոկտեմբերի։ Եղանակը արդեւեց ճակնդեղի հնձին։ Շաքարը թանդացաւ։

ՏԱԳԱՆՐՕԳ, 7 հոկտեմբերի։ Ռէյսը սառուցով ծածկվեցաւ։ Եօթ վերստ տարածութեան վրա։

ՄՕՐՇԱՆԱԿ, 7 հոկտեմբերի։ Ցնա և Մոկշա գետերի վրա դէպի Նիժնա զնացող քարվանը օկային չը հասած սառուցով պատվեցաւ։

ՕՐԵՆԲՈՒՐԳ, 7 հոկտեմբերի։ Ցուրտ է։ Ուրալ գետը սառուցով ծածկվեցաւ։

ՕԴԷՍՍԱ, 7 հոկտեմբերի։ Երկաթուղու շարժողութիւն սկսվեցաւ Պերեսիպ տեղի ճիւղի վրա։ Բաւական շատ հաց է տարվում։

ՓԱՐԻԶ, 7 հոկտեմբերի։ Պաշտօնական տեղեկութեան համեմատ 1882 թուին 9 ամսվայ ընթացքում բերված են ապրանքներ 3,663,540,000 ֆրանկի և դուրս են տարված 2,760,939,000 ֆրանկի։ Պատգամաւորների ժողովի պարապմունքները կը սկսվեն նոյեմբերի 6-ին։

ՐՈՒՇԶՈՒԿ, 7 հոկտեմբերի։ Սերբական թագաւորը ընծայեց շատերին, մանաւանդ ռուս օֆիցերներին ցակօվա շքանշանը։ Իշխան Ալէքսանդրի տուած պաշտօնական ճաշի ժամանակ թագաւորը ողևորված կենաց առաջարկեց Սերբիայի և Բուլգարիայի միութեան համար։ Այսօր սերբական թագաւորը ուղևորվում է Բուխարեստ։

Կ. ՊՕԼԻՍ, 7 հոկտեմբերի։ Բ. Դուռը անգլիական դեսպանին մի շրջաբերական ուղարկեց, որ ցանկութիւն է յայտնում կատարեալ համաձայնութիւն կայացնել Անգլիայի հետ Եգիպտոսի վերաբերութեամբ։ Դեսպանները ընդդիմանում են սուլթանի արգելքին Դարդանելեան նեղուցից դինամիտով բեռնաւորված նաւերի անցնելուն, այդ միջոցը դաշնագիրների հակառակ համարելով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 հոկտեմբերի։ Երեքշաբթի երեկոյեան Պավլովսկի շրջականերում միաժամանակ այրվում էր եօթը տեղ։ Բարձը տեղերից բոցի մի ամբողջ ծով էր երևում։ Կօլպինի մէջ անտառ է այրվում։ Լրագիրները ենթադրում են, որ հրդեհ է դցված։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ „Новости“ լրագրին հաղորդած լուրը մանաւոր անձանց կողմից կէս միլիոն նուիրատուութեան մասին յօդուա բժշկական կանանց կուրսերի, հնարված է։ „Голосъ“ լրագիրը լուր է հաղորդում, որ առևտրական մի քանի բանկեր անչափաւոր պարտքեր են տալիս հացի բեռների գրաւականով և հացի առևտրի վատութեան պատճառով դժուար դրութեան մէջ են։ „Новости“ լրագիրը հաղորդում է, որ 1883 թ. հաշի համեմատ կազէօնայա պալատների կառավարիչների ռոճիկները բաւական շատացրած են։ Կառավարական բաժնի մէջ նախագիծ է կազմված, որի համեմատ աւելի խիստ հսկողութիւն է նշանակվում գիւղական բանկերի կառավարիչների վրա։

ՐԵԱԶԱՆ, 7 հոկտեմբերի։ Երէկ կայացաւ նահանգական դատարանի ճաշը Ռիկովի կայքերը կալանաւորելու մասին։

ՍԱՄԱՐԱ, 7 հոկտեմբերի։ Երէկ Օրենբուրգեան ճանապարհի Սամարեան կամուրջը փորձվեցաւ։ Փօստային գնացքները անցան առանց ճանապարհորդներին իջեցնելու։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 հոկտեմբերի։ „Русскія Вѣдомости„ լրագիրը գնված է մի ընկերութիւնից Սօբոլեվսկու առաջնորդութեամբ։ Բերդիանսկի գաւառի մէջ կալանաւորված են երկու թուղթեր, որոնք սպանեցին փօստատարին և կողոպտեցին փօստը Մելիտօպոլի մօտ սեպտեմբերի վերջը։ Կողոպտած կէս միլիօնից գտնված է 160,000 ռ.։ Մօսկվայի մէջ տեղափոխվող բանտում երկու խումբ լեռնաբնակներ կան, որոնք Տվերսկայա նահանգից հայրենիք են վերադառնում։ „Правит. Вѣст.“ լրագիրը հերքում է լուրը, իբր թէ Խարկով-Ազովեան կամուրջը կօրօչեվկի մօտ խանգարված է։ Սիբիրեակով հետախուզում է սահնակի ճանապարհը ներքին Սիբիրը ապրանքներ տանելու համար։ „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ թէպէտ Մօսկվայի մէջ պրեմիաներ ստացան Կայսր Ալէքսանդր II-ի արձանի չորս նախագիծները, բայց նրանցից ոչ մէկը կատարելապէս բաւարար չէ համարված։

ԽԱՐԿՕՎ, 7 հոկտեմբերի։ Ուսումնարանական հոգաբարձուն յայտնեց, որ համալսա-

բանին տուած տեխնօլօգիական ինստիտուտի ֆիզիկական բաժինը կը մնայ այնտեղ 1½ տարի: Շինութեան մէջ պօլիտեխնիկական ուսումնարան կը բացվի: Համալսարանը եւ-րևի չի տեղափոխվի որոշված ժամանակամիջոցով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳ, 7 Հոկտեմբերի: Քննութիւնը „Новгородъ„ նաւի վրա եղած ճայթիւնի մասին վերջացած է: Ճայթիւնը պատճառել է ունտերօֆիցեր Պախտանին դիտմամբ, կամ պատահմամբ և ինքն էլ սպանված է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 Հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 91 ր. 62 կ., երրորդ 91 ր. 26 կ., չորրորդ 90 ր. 25 կ., հինգերորդ 90 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 201 ր. 75 կ., երկրորդ 204 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. 50½ կ., երկրորդ 89 ր. 50 կ., երրորդ 89 ր. 50 կ., ոսկի 8 ր. 20 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 24,15 պէնս, Ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 205 մարկ 75 պֆ., Փարիզի վրա 253 ֆրանկ 75 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը Թոյլ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տրվում է վարձով Սալի մեծ փողոցի վերայ Ալէքսանդր Թահիրեանցի նոր շինած տներում, վերին յարկում, ԵՐԵՔ ԵՒ ՉՈՐՍ ՍԵՆՆԵԱԿՆԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԼՈՒՍԱՒՈՐ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ իրանց խոհանոցներով ԵՒ ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, նոյնպէս առանձին մէկ մէկ սենեակով. ներքին յարկում խանութներ արժան գներով, պահեստներ (подвали) 20—30 սաժէն երկարութեան և 10 արշին լայնութեան իր ջրհորներով, ՍԱՌՑԱՏԵՂԵՐՈՎ. շատ յարմար է գինու, հացի, երկաթի և այլ մթերքների համար վարձել, մանաւանդ ապիրտի զաւօդի և սլեսարնի վերաբերեալ գործարանի համար: Նոյնպէս տվում է հայոց փողոցին կից Պրիկազնի ուլիցում № 10 տան ներքին յարկը եօթն օթախից բաղկացած լուսաւոր և գեղեցիկ բնակարան իր կուխնայով, ներքնատնով, առանձին պարադնի մուտքով: Նոյն տեղում № 7 տան վերին յարկը չորս օթախից բաղկացած բնակարան իրա կուխնով, ներքնատնով և ամեն յարմարութիւնով: Գների համար խօսել կամեցողը կարող է իմանալ իրանից՝ ԹԱՀԻՐԵԱՆՑԻՑ ԿԱՄ ՆՐԱ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆՑԻՑ.

1—3

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

սիստեմատիքական ընթացք

Գրիգորի Վարձելեան

հայոց միջնակարգ ուսումնարանների համար

մասն առաջին (ամբողջ թուեր)

Մամուլի տակն է և սեպտեմբերի առաջին օրերին լոյս կը տեսնի նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ թուեր և երրորդական կանոններ):

Գինն է 40 կոպ.

Ուսումնարաններին զիջումն 20%:

Ծախվում է Վ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան խանութում:

Օտար տեղերից դիմում են այս հասցէով Тифлисъ, въ Агентство В. Шавердова:

Ներսիսեան դպր. աւարտած և ուսուցչութեամբ պարապած մի երիտասարդ կամենում է, ձեռնտու պայմաններով, ուսուցչի պաշտօն ունենալ կամ քաղաքում կամ թէ գիւղում:

Պայմանները կարելի է իմանալ Գօլօվինսկի պրօսպեկտի վրա, „Վարշաւսկայա պեկարնեայ„ կոչուած խանութում պ. Մարտիրոս Հախնազարեանից:

2—5

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

ԳԷՈՐԳ ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑ

Բնակվում է իր սեփական տանը № 8/29, անկիւն Սապեօրնայա և Մեծ-Վօզօվօզնայա փողոցների, նոր շինվող Թատրոնի մօտ:

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է կլիէնտներին առաւօտեան 9 ժամից մինչև 11 և երեկոյեան 6 ժամից մինչև 8 ժամ:

2—2

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է ունենալ որ և է պաշտօն ՄԱԳԱԶԻՆՆԵՐՈՒՄ կամ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐՈՒՄ Թիֆլիսի մի յայտնի անձնաւորութեան երաշխաւորութեամբ:

Հասցէն կարելի է իմանալ „Մշակի„ խմբագրատանը:

2—5

„ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ„ մեծ. անդամները կիւրակի, հոկտեմբերի 10-ին, առաւօտեան 11 ժամին, հրաւիրվում են պ. Արծրունու Թատրոնի դահլիճը, ներկայ գտնուելու ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, որ յետաձգուեցաւ հոկտեմբերի 3-ին ժողովի օրը:

2—2

ԹԷՅ առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւէտ: Այդ թէյից ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ր.—1 ր. 20 կոպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ր. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ր. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր. 50 կ., գեղեցիկ ԿԱՅՍԱՐԻ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ֆու-չու-ֆու թէյ 2 ր. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր.—60 ր., երկաթէ ԳՐԻԶՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շօկօլադ Ֆրայ, Շեֆիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԴԱՈՒ, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ Վէբլի, ԹԱՄԲԵՐ Բալնեբիի, կօլմանի նըշըշտայ, ԱԼԲՕՄՆԵՐ Շվարցի կէս գնով: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՅՈՒՄ № 156, 157, 158, 159 և 100:

54—100

Въ Редакціи газеты «МШАКЪ» Продается брошюра „ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“ Д. Григорія АРЦРУНИ. Брошюра напечатана въ Москвѣ. Цѣна 25 коп.

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

„Ժուռնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այժմ նոր հրատարակութիւնը:

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 րուբլ է, կէս տարվանը 4 րուբլ:

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում դիմելով հետևեալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Միջի փողոց, կաթօլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սունդուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամօվարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) րէվօլվէրի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրօս և Թամբաքու կուշնարօվի գիլզի պապիրօզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) Էյնէմի. կօֆէ Էյնէմի և Միխէյլօնի. Պետերբուրգում 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէփաճաւոների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) դուլթուկ (пухъ), պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հաւը, կուխնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօրներ կարելու մաշինայ. Անգլիական ուլթաներ, Բրիտանկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջագացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօբկէն 18 կ., վաքս Ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիէներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չումիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալստուկներ, գոտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շերմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆէլչաոկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կոտր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) Միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

152—180

Միջի փողոց, կաթօլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

ՐԱՖՖԻ

ԽԱՄՍԱՅԻ ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Գիրքը բաղկացած է 467 երեսներից

Թիֆլիսում վաճառվում է

„Մշակի“ խմբագրատանը.—„կենտրոնական գրավաճառանոցում“ Միրիմանօվի տանը № № 3 և 4. պ. Զաքարիայ Գրիգորեանցի „կովկասեան գրավաճառանոցում“.— պ. Էնֆիաճեանցի ծխախոտի խանութում.— պ. Շահինեանցի ծխախոտի խանութում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով:

ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ“. РАФФИ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷ․Ջ․ ԹԷՅԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՔՐԱՑՈՒՄՆ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷԱ № № 156, 157, 158, 159 և 160.

Համեմատեցէք թէյ

1 ր. 10 կ. թէյի հետ ամեն տեղ	1 ր. 30 կ.
1 „ 20 „	1 „ 60 „
1 „ 40 „	1 „ 90 „
1 „ 60 „	2 „ 20 „
1 „ 80 „	2 „ 50 „
ամենալաւը 2 ր.	3 „ ——

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօկօլադի և կակաօ-ֆրայ էսսենցիայի, Պալմերի բիսկվիտների, Բազրի կօնֆեկտների, Շեֆիլդի դանակների, Տուրների գրիչների, Դաուի հրացանների, Վէկլիի րէվօլվէրների, Բարնսբիի Թամբերի, Մեկլինի ամաններ, կօլմանի կրախմալ և մանանեխ, Շվարցի ալբօմներ և այլն և այլն:

7—100

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Октября 1882 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. зак. д.